## «ԽԱԼԴԵՐԷՆ ԼԵԶՒԻ ԲԱՆԱԼԻՆ»

Այս վերնագրով եւ *Արգար Պայազատ* (ուտէացի) հեղինակութեամբ մի նոր գիրք է լոյս տեսել Երեւանում: Գործին կցւած է յայտնի լեզւաբան Հ. Աճառեանի յառաջաբանը, որ կատարելապէս համամիտ է աշխատութեան հիմնական մտքին՝ թէ խալդերէն լեզւի բանալին պէտք է համարել արդի *ուտիերէն* լեզուն: Ուտիները, յայտնի է, ընդամենը մի քանի հազար հոգուց բաղկացած փոքրիկ ժողովուրդ են ներկայիս եւ ապրում են Նիժ, Վարդաշէն ու հարեւան գիւղերում (Նուխւայ գաւառ, Ադրբէջան)։ Կրօնով հայադաւան են եւ համարւում են հին աղւանների սերունդ: Արգար Պայազատ առաջ է բերում իր գրքի մէջ մի շարք բառեր, որոնք, իր ասելով, նոյնանում են խալդերէնի նոյնահունչ բառերի հետ նաեւ իմաստի կողմից: Քերականական ձեւերի մէջ եւս նմանութիւն ու նոյնութիւն է գտնում հեղինակը: Այս հիմնական մտքին Աճառեան անվերապահօրէն տալիս է իր համաձայնութիւնը: Ընդհակառակը, Երեւանի մասնագէտները, ըստ երեւոյթին, խիստ թերահաւատ են: Ցամենայն դէպս, հետաքրքրական է արծարծւած տեսութիւնը: Մասնագէտներին է մնում միայն որոշել, թէ ո՛րչափ հիմնաւոր է այն:

## ՆԱՀԱՏԱԿ ԳՐԱԳԷՏՆԵՐԻ ԲԱՐԵԿԱՄՆԵՐԸ

Նահատակ Գրագէտներու բարեկամ - ները լոյս են ընծայել իրենց մատենաշարի 10-րդ գիրքը՝ *Արտ Ցարութիւնեանի «Արձակ էջեր եւ քերթուածներ»*, որով խոստացած շարքը համարւում է փակւած:

Ն. Գ. Բարեկամների Ընկերութեան սկզբնական նպատակն էր, ինչպէս յայտնի է, լոյս ընծայել Մեծ Եղեռնին զոհ գնացած գրողների երկերը: Ասյա, գործի ընթացքում, այդ ծրագիրը ընդլայնւեցաւ եւ մէջը առնւեցին նաեւ ուրիշ մեռած գրողներ, իբրեւ այլ կարգի նահատակներ: Այսուհետեւ, հաւանաբար, մէջը առնւին եւ կենդանի - նահատակներ. արդէն ո՞ր հայ գրողը նահատակ չէ որ...

Ն. Գ. Բ. Ընկերութեան հրատարակած հատորները նւիրւած են հետեւեալ հեղինակներին.— Ռ. Զարդարեան, Մ. Կիւրճեան, Գ. Տէր - Կարապետեան, Գ. Բարսեղեան, Ա. Արփիարեան, Գ. Զօհրապ, Տ. Չէօկիւրեան, Օհան Կարօ, Ե. Օտեան, Արտ. Ցարութիւնեան:

Ընկերութեան գործունէութեան մասին որոշ գաղափար տալու համար առաջ բերենք հետեւեալ թւերը.

*Մուտք*.– Նւէրներ՝ 10,133 ֆր. 85 ս., Տարօնի Հայր. Միութիւնից Գ. Տէր - Կարապետեանի հատորի հրատարակութեան համար փոխան 500 գրքի՝ 10,126,80, բաժանորդներից 3,620,80, Նիւ - Եորքի մասնաճիւղից՝ 25,465,85, գրքերի վաճառումից՝ 43,187,15 – ընդհանուր գումար 92,534,45 ֆր.:

*Ելք*.– Տասը հատորի տպագրութեան՝ 61,196 ֆր., հեղինակի իրաւունք՝ 2504,20, ընդօրինակութեան՝ 7996,70, պաշտօնեայի՝ 7075,90, առաքման եւ այլն՝ 13,547,35, — ընդհանուր գումար՝ 92,320,15 ֆր.: Առ դեկտեմբեր ամիս սնտուկում պատրաստ՝ 214,30 ֆր.:

Այս թւերը ինքնին պերճախօս են: Ընկերութիւնը, ինչպէս տեսնւում է, շահակցական ոչ մի նպատակ չունի եւ հիմնւած է բացառապէս զոհաբերութեան սկզբունքի վրա: Հատորները կազմւած են Բարեկամների անձնական